ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹԻՆ
(10 հոկտեմբերի 1988 թ.)

Սույն հավաքույթը միաբանական հավաքույթ է, ընդլայնված, որին մասնակցում են Մայր Աթոռիս միաբանները, Արարատյան թեմի քահանայից դասը և հոգևոր ճեմարանի ուսանողները: Սակայն տեսնում եմ, որ ներկա են նաև մեր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Մայր Աթոռի պաշտոնյաներից շատերը: Ես գոհ եմ անշուշտ այս բազմամարդ հավաքույթի համար և ողջունում եմ բոլորիդ, սակայն վախենում եմ, որ ձեզ հուսախաբ անեմ, որովհետև չգիտեմ, թե դուք ինչ եք սպասում ինձանից այսօր: Իմ խոսքը լինելու է՝ ո՛չ քարոզ, ո՛չ ճառ, ո՛չ էլ դասախոսություն, այլ մի զրույց ուսուցչական բնույթ ունեցող, այնպես, ինչպես ես անում եմ ամեն չորեքշաբթի օր մեր միաբանական հավաքույթներին:

Գերաշնորհ Սիոն սրբազանը իր բացման խոսքում ասաց, որ իմ ասելիքը կապված պիտի լինի արդիական հարցերի հետ: Դա ճշմարիտ է: Արդիական հարցեր ասելով, վերջին ամիսներին, ինչպես գիտեք, հասկանում ենք հարցեր՝ կապված Ղարաբաղյան տագնապի հետ: Իմ խոսքը, այո, որոշ չափով առնչվելու է այդ հարցերին:

Այսօր իմ նպատակն է առավել հստակություն մտցնել որոշ գաղափարների իմաստի մեջ, որոնք օգտագործվում են հաճախ վերջին ամիսներին Ղարաբաղյան տագնապի ընթացքում: Խոսքը վերաբերում է հատկապես ազգություն, ազգայնականություն, միջազգայնականություն, օտար բառով նացիոնալիզմ, ինտերնացիոնալիզմ գաղափարներին կամ հասկացություններին: Ահա այս գաղափարների շուրջ է, որ ցանկանում եմ փորձել առավել հստակություն մտցնել նրանց իմաստների մեջ, որովհետև նկատում եմ, որ ընդհանրապես այդ հասկացությունները կամ գաղափարները անհրաժեշտ չափով հստակ չեն ըմբռնվում բոլորի կողմից:

Նախ անմիջապես ասեմ, որ այս գաղափարները, ինչպես այլ մեծ գաղափարներ, հարաբերական իմաստ ունեն, որոնք փոփոխության են ենթարկվում ժամանակի ընթացքում: Իրոք, պատմության տարածքի վրա, նման հասկացություններ կայուն ու անփոփոխ իմաստ չեն ունեցել: Մենք՝ այսօր ապրողներս, երբեմն շփոթվում ենք, մեր օրերի ըմբռնումներով հասկանալով երևույթներ և գաղափարներ, որոնք ձևավորվել են և իմաստա-

վորվել տարրեր բովանդակությամբ, մեզանից երկու, երեք հազար և ավելի տարիներ առաջ: Այդ է պարագան ազգություն, ազգայնականություն գաղափարների, ինչպես և արդարություն, ազատություն կամ ընտանեկան բարոյական հասկացությունների:

Արդարության գաղափարը օգտագործվել է հնագույն ժամանակներից ի վեր, հատկապես հելլենական քաղաքակրթության օրերից սկսած: Մեծ փիլիսոփաներ, մտածողներ, մեր թվագրությունից առաջ տակավին, օգտագործել են այդ գաղափարը իրենց ժամանակի ըմբռնումներով, որը սակայն չի ունեցել այն բովանդակությունը, որ ունի մեր ժամանակներում: Այսպես օրինակ՝ ստրկատիրությունը անարդար դրություն չի համարվել նրանց համար, այլ բնական և նույնիսկ անհրաժեշտ երևույթ: Արիստոտելի նման մեծ մտածողը (մ. թ. ա. 4-րդ դարում) հաստատում է, թե «ամեն քաղաքակրթություն հիմնված է, կառուցված է ստրկատիրության հիմքերի վրա»:

Միջին դարերում, Եվրոպայում, քրիստոնյա Եկեղեցին արդարության գաղափարը այլ ձևով էր հասկանում: Մանավանդ հավատաքննության դարաշրջանում, խարույկների վրա հրկիզվում էին տասնյակ հազարավոր մարդիկ, և դա նկատվում էր արդար գործ, մարդկանց և Աստուծո դատաստանի առաջ: Նույնպես միջին դարերում, ավատապետական հասարակարգում մինչև ֆրանսիական հեղափոխություն գրեթե, ընկերային քաղաքական կյանքը հիմնված էր հետևյալ սկզբունքների վրա՝ հոգևորականները աղոթում են, ազնվականները ղեկավարում և պաշտպանում են երկիրը, իսկ հասարակ ժողովուրդն ու գյուղացիությունը աշխատում են: Այդ ընկերային դրության մեջ, պետության հարկ տվողները միայն գյուղացիությունն էր և հասարակ ժողովուրդը: Հոգևորականներն ու ազնվականները տուրք չէին վճարում, և այդ դրությունը նկատվում էր արդար: Շատ հավանական է, որ հարյուր, երկու հարյուր տարիներ հետո, արդարության գաղափարը այլ բովանդակություն ունենա:

Ազատության գաղափարն էլ պատմության ընթացքում տարբեր ձևերով է ըմբռնված: Նույնիսկ մեր օրերում ազատության գաղափարը տարբեր իմաստներ ունի, նայած թե աշխարհի ո՞ր շրջանում, ո՞ր հասարակարգում է օգտագործվում այն: Նույնը կարելի է ասել ընտանեկան բարոյականի գաղափարի մասին: Մենք այսօր ընտանեկան բարոյական ասելով մեր որոշ ըմբռնումը ունենք, հայ ժողովրդի ավանդական հասկացողության համաձայն: Բայց բոլոր ժամանակներում ամեն տեղ նույնը չի եղել: Նույնիսկ մեր օրերում այդպես չէ ամեն տեղ: Նույնպես շատ հավանական է, որ հարյուր և ավելի տարիներ հետո, ընտանեկան բարոյականի հասկացությունը ուրիշ բովանդակություն ստանա:

Մոտավորապես նույնն է նաև ազգության գաղափարի պարագան: Մեր ներկա հասկացողությամբ, մենք հայերս՝ ազգ, ազգային ասելով հասկանում ենք մի ժողովուրդ՝ նույն ծագումը ունեցող, նույն ցեղային կազմավորումը, նույն պատմությունը, նույն լեզուն խոսող, պատմականորեն որոշ հողամասի վրա զարգացած, որ նույն կրոնական և բարոյական ավանդությունները ունի, մեկ ազգային Եկեղեցու հովանու ներքև: Մոտավորապես այսպես ենք ըմբռնում մենք այսօր ազգության գաղափարը: Մեր օրերում նաև ուրիշ շատ ժողովուրդներ նույն ըմբռնումը ունեն, սակայն ոչ բոլորը: Օրինակի համար՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները ազգային պետություն չէ: Այնտեղ ապրում են բազմաթիվ ազգություններ, հավանաբար հարյուրից

ավելի, որոնք ամերիկացի ասելով մեր Ավանդական ըմբռնումով ազգություն չեն հասկացվում: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ազգություն (nation) բառը օգտագործվում է քաղաքացի գաղափարի իմաստով միայն, այսինքն՝ Միացյալ Նահանգների բոլոր քաղաքացիները կազմում են մի ազգություն երկրի օրենքների և միջազգային օրենքի առջև, անկախ այն իրողությունից, թե նրանք ազգային ծագումով անգլիացի՞ են թե գերմանացի, սեամո՞րթ՝ թե հրեա, իսպանացի՞՝ թե չինացի և այլն: Ուրիշ խոսքով՝ ազգության գաղափարը նույնանում է քաղաքացիության գաղափարի հետ: Այս ըմբռնումով հայերը, որոնք ապրում են աշխարհով մեկ ցրված, օրենքի առջև հայ ազգության չեն պատկանում, այլ ամերիկացի են, ֆրանսիացի կամ անգլիացի կամ ռումինացի և այլն: Թեև, մեր օրերում, հայկական ըմբռնումով և զգացողությամբ, ազգության գաղափարը անբաժանորեն կապված է մեր՝ մայր հայրենիքի, մեր ազգային պատմության, մեր մայրենի լեզվի ու մշակույթի և մեր մայր Եկեղեցու հասկացությունների հետ: Սակայն նույնիսկ մեր ժողովրդի պարագային այդպես չի ըմբռնվել ազգության գաղափարը պատմության ընթացքում: Օրինակ՝ Վարդանանց պատերազմը տեղի է ունեցել «հանուն հավատի և հանուն հայրենյաց», բայց ոչ հանուն հայ ազգի: Ազգայինի գաղափարը գրեթե բացակայել է: Առաջնային են նկատվել հայրենիքի և կրոնական հասկացությունները: Հազար հինգ հարյուր տարի առաջ, ուրեմն, հայրենիքի գաղափարը չի նույնանում ազգության գաղափարի հետ: Որոշ ազգերի պարագային, նույնիսկ այսօր, հայրենիքի գաղափարը չի նույնանում ազգայինի գաղափարի հետ, որովհետև մի քանի ազգություններ կարող են բնակվել նույն հողամասի վրա, և նույն ազգության պատկանող անձինք կարող են ապրել տարբեր երկրներում, տարբեր ազգությունների հետ, ինչպես պարագան է այսօր հայ ժողովրդի: Որով, միշտ չէ որ նույնանում են ազգ և պետություն հասկացությունները, ազգ և հայրենիք հասկացությունները: Նույնպես չեն նույնանում ազգ և կրոն հասկացությունները. օրինակ՝ կաթոլիկ հավատացյալի համար իր կրոնական հավատքը իր ազգության պատկանելության հետ չի կապված: Իսպանացին էլ կաթոլիկ է, ֆրանսիացին էլ, լիբանանցին էլ, նույնիսկ որոշ հայեր: Ուրեմն կրոնը, Եկեղեցին միշտ չէ որ բնորոշում են տվյալ ազգը, թեև մեր հայերիս պարագան տարբեր է, որովհետև մեր կրոնական առաքելական դավանությունը ծնունդ է առել, պատմականորեն զարգացել ու պահպանվել մեր ազգային իրականության սահմաններում: Եվ մենք հոգեբանորեն, հայ ժողովրդի բոլոր զավակները նկատում ենք Հայ Եկեղեցու զավակ:

Ազգայնականության գաղափարը համեմատաբար նոր գաղափար է իր ամբողջական արդիական իմաստավորումով: Հելլենական շրջանում, օրինակ, ազգայնականության գաղափարը տարբեր էր ըմբռնվում: Բնականաբար, նրանք գիտակցում էին, որ իրենք հույներ են, որ նույն լեզուն են խոսում և բազմաստվածության նույն կրոնն են պաշտում, սակայն հին Հունաստանում ամեն աշխարհագրական շրջան՝ Աթենքի շրջանը, Սպարտան, Կրետեն, Մակեդոնիան և այլ շրջաններ, քաղաքականապես իրար հետ չէին կապված, նույն պետությունը չէին կազմում, առանձին իշխանություններ էին, երբեմն մեկը մյուսին ոչ բարեկամ, պաշտում էին նույնիսկ տարբեր աստվածներ, ուրեմն ազգային հայրենիքի իմաստով մեկ ամբողջություն չէին կազմում:

Նույնը կարելի է ասել Հռոմեական կայսրության շրջանի համար, որ հսկա մի պետություն էր Միջերկրական ծովի շուրջ և որի քաղաքական իշ-

խանությունը տարածվում էր հարյուրավոր երկրների ու ազգությունների վրա: Հռոմեական օրենքի առջև բոլորն էլ հռոմեացի էին, ազգային գաղափարը բացակայում էր: Հռոմեական իրավունքի ըմբռնումով՝ պետությունը իրավական ձևն էր մարդկային հավաքականությունների կյանքի: Ինչպես տեսնում եք, խոսվում է մարդկային հավաքականությունների մասին, առանց ազգության գաղափարը շեշտելու:

Հռոմեական կայսրության տիրապետության վերջին շրջանում, Բ—Դ դարերում, քրիստոնյաների դեմ հալածանքների օրերին, տարբեր ազգությունների պատկանող քրիստոնյաների համար էլ ազգային պատկանելությունը առանձին նշանակություն չուներ: Հիմնականը քրիստոնյա լինելն էր: Ամեն ըմբռնումներից վեր տիրում էր քրիստոնեական եղբայրության գիտակցությունը: Հաճախ քրիստոնյաների դեմ հալածանքների այդ շրջանում, երբ մի քրիստոնյա կանգնած էր լինում հռոմեական դատարանի առաջ ինչ-որ մեղադրանքի տակ, երբ դատավորը հարցնում էր՝ «Ի՞նչ է քո անունը», մեղադրյալը պատասխանում էր. «Ես քրիստոնյա եմ»: Դատավորը հարցնում էր՝ «Որտե՞ղ ես ծնվել», մեղադրյալը պատասխանում էր՝ «Ես քրիստոնյա եմ»: Դատավորը հարցնում էր՝ «Ի՞նչ ազգի, ի՞նչ ցեղի ես պատկանում», ստանում էր նույն պատասխանը՝ «Ես քրիստոնյա եմ»: Այդ դարաշրջանում, նաև քրիստոնյաների մեջ տիրում էր ոչ թե ազգայինի, այլ կրոնական պատկանելության գիտակցությունը:

Բյուզանդական կայսրության շրջանում ևս, մոտ հազար տարի, մինչև Կ. Պոլսի անկումը, ազգության գաղափարը կամ ազգային պատկանելությունը նույնպես բնորոշ վիճակ չէր, այլ՝ քրիստոնյա լինելու հանգամանքը, այն էլ քաղկեդոնական իմաստով: Բյուզանդական կայսրությունն էլ, ինչպես հռոմեականը, բազմազգ պետություն էր և իբրև պետություն ազգայինի հանգամանք չուներ:

Ազգայինի գաղափարը մերօրյա ըմբռնումով կազմավորվեց և ուրույն բովանդակություն ստացավ Եվրոպայում, հատկապես անցյալ դարի ընթացքում, դրա համար էլ պատմաբանները 19-րդ դարը բնորոշում են որպես ազգությունների դար, երբ շատ ժողովուրդներ Եվրոպայում, ազգային ինքնագիտակցության զարթոնք ապրեցին և բուռն զարգացում՝ ընդդեմ բռնակալ պետությունների, որոնց լծի տակ էին ապրում, հատկապես ավստրիական, օսմանյան և ցարական իշխանությանց: Անշուշտ, ազգայնականության գաղափարի զարթոնքը կապված է եղել ազգային-ազատագրական քաղաքական շարժումների հետ, որոնց սկզբնաղբյուրը կարելի է նկատել 1789-ի ֆրանսիական հեղափոխությունը: Այսպես է, որ Եվրոպայում և աշխարհում կազմավորվեց ազգայինի, ազգայնականության հասկացությունը իր մերօրյա ըմբռնումով և բովանդակությամբ: Ավստրիան, Օսմանյան կայսրությունը և Ցարական պետությունը այն երեք միապետական տերություններն էին, որոնց տարածքի վրա գտնվող ազգությունները ազգային-ազատագրական արյունալի պայքարների ճանապարհով իրենց ազգային անկախությունը ձեռք բերեցին՝ մինչև 20-րդ դարի սկիզբները:

Այսպիսով Եվրոպայում կազմավորվեցին բազմաթիվ ազգային պետություններ՝ Իտալիան, Գերմանիան, Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան, Սերբիան, Ալբանիան, ավելի ուշ՝ Լեհաստանը, Արաբական երկրները և այլն:

Թուրքիայում էլ ծնունդ առավ թրքական ազգային-ազատագրական մի շարժում ընդդեմ սոզթանական տերության: Ինչպես հիշեցինք վերևում,

Օսմանյան կայսրությունը ազգային պետություն չէր, այլ բազմաթիվ ազգությունների քաղաքական միավորում սուլթանական իշխանության ներքո, սակայն 19-րդ դարի վերջերից սկիզբ առավ թուրքերի ազգայնական շարժումը նախ արտասահմանում և հետո Թուրքիայում: Այդ շարժումը մեր բոլորիս ծանոթ՝ Երիտասարդ թուրքերի կուսակցության շարժումն էր, որոնք հրապարակ իջան թրքական բուրժուական ազգայնականության կարգախոսներով ընդդեմ սուլթանական իշխանության, նպատակ ունենալով հաստատել համա-թրքական ազգայնական մի պետություն: Թալեաթ փաշան և իր ընկերները այդ կուսակցության ղեկավարներից էին, որոնք իրականացրին իրենց ազգային իդեալը, 1908-ին տիրանալով Թուրքիո իշխանությանը, ե իրենց ծրագրի գործադրման ճանապարհին գլխավոր իրագործումը նկատեցին 1915—16-ի հայոց ցեղասպանությունը Թուրքիո ամբողջ տարածքի վրա: Թալեաթը և իր կուսակիցները ծրագրեցին և գործադրեցին հայ ազգի բնաջնջումը հանուն թրքական ազգայնականության իդեալի իրականացման, հանուն իրենց երկրի ամբողջական թրքացման: Նույնիսկ նրանց հեռավոր իդեալն էր, հետագայում միանալ թրքական ծագում ունեցող այլ ժողովուրդների հետ և ստեղծել համաթուրանական մի կայսրություն: Թրքական ազգայնականության այդ իդեալի զոհը գնաց հայ ժողովուրդը 1915-ին:

Հարց տանք, թե ազգայինի հասկացությունը ի՞նչ հիմքերի վրա հաստատված կարելի է ըմբռնել:

Նախ ցեղային կազմավորման հիմքի վրա, այն հասկացողությամբ, որ նույն ցեղին կամ նույն ցեղախմբին պատկանող ժողովուրդները կազմում են մեկ ազգություն և նախանձախնդիր են լինում, որ իրենց ցեղային կազմավորումը անխառն պահեն ու իրենց քաղաքական տիրապետությունը հաստատեն այդ հիմքի վրա:

Երկրորդ՝ ազգությունը կարելի է ըմբռնել ավելի իբրև մշակութային երևույթ: Մեր այսօրվա ըմբռնումով և աշխարհով մեկ ցրվածության պայմաններում, կարծում եմ հայ ժողովրդի համար ազգության գաղափարը ուղիղ կլինի հասկանալ առավելապես մշակույթի հիմքի վրա, մշակույթ հասկացությունը ըմբռնելով իր լայն իմաստով, նրա բաղկացուցիչ տարրերը համարելով՝ հայ ժողովրդի ազգային լեզուն, գիրն ու գրականությունը, հին և նոր մատենագրությունը, սովորությունները, հոգե-բարոյական նկարագիրը, կրոնական քրիստոնեական դավանանքը՝ ազգային Եկեղեցու հովանու ներքո, ինքնավար ու անկաշկանդ գոյատևելու կամեցողությամբ հայրենի երկրի հողի վրա:

Երրորդ՝ ազգության գաղափարը կարելի է հասկանալ պետական իրավական հիմքերի վրա, իբրև քաղաքական իրավիճակ: Այս ըմբռնումի մասին ես խոսեցի արդեն, բերելով օրինակը Հռոմեական կայսրության և մեր օրերի Ամերիկայի Միացյալ Նահանգաց:

Այժմ մի պահ կանգ առնենք առաջին ըմբռնումի վրա: Ազգության ցեղային գաղափարախոսությունը իր գագաթնակետին հասավ հատկապես անցյալ դարից սկսյալ: Ֆրանսիացի մի հեղինակ՝ Ժոզեֆ Արթուր Գոբինո անունով, որը զբաղմունքով լինելով դիվանագետ, առանց մարդաբանական գիտական պատրաստություն ունենալու, անցյալ դարի առաջին կեսին գրել է մի նշանավոր գիրք, առաջին գիրքը այս թեմայով, որը կոչվում է «Ուսումնասիրություն մարդկային ցեղերի անհավասարության մասին», լույս տեսած 1855-ին, որտեղ հեղինակը լայնորեն քննարկում է տվյալ հարցը, վեր

հանելով այն հիմնական գաղափարը, թե երկրագնդի վրա բնակվող ցեղերը, ժողովուրդները հավասար չափով օժտված չեն, այլ բազում անհավասարություններ կան նրանց միջև՝ բնախոսական, ցեղային կազմավորման, իմացական հոգևոր կարողության, լեզվի, բարոյական նկարագրի և այլ ընդունակությունների տեսակետից: Հեղինակը փորձում է նույնիսկ այդ ընդունակությունները հիմնել նաև մարմնական, օրգանական տվյալների վրա, ինչպես՝ մարդկանց գանգերի ձևերն ու չափերն են, արյան բաղադրությունը, մաշկի գույնը և այլն:

Գոբինոն այսպիսով զարգացնում է իր թեզը, հասնելով այն եզրակացության, որ լավագույն ընդունակություններով օժտված բոլոր տեսակի ցեղերի մեջ արիական ցեղն է, որ միակն է հանդիսացել քաղաքակրթության ջահը բարձր պահող և թե աշխարհի վրա, ուր որ այս կամ այն չափով մշակույթ և քաղաքակրթություն է ստեղծվել, այնտեղ տվյալ ժողովուրդների երակներում անպայման արիական ցեղի արյունն է խառնվել: Հեղինակը եզրակացնում է նաև, թե այն ժողովուրդը, որն առավելագույն չափով արիական ցեղի արյունն ու ընդունակություններն է պահպանել, դա գերմանացի ժողովուրդն է: Այսպիսով, Գոբինոն հանդիսանում է արիական ցեղաբանության ուսմունքի հիմնադիրը: Նրա տեսությունները շարունակողը եղել է մի անգլիացի հեղինակ՝ Չեմբեռլեն անունով, անցյալ դարի վերջերին: Այս երկու հեղինակները իրենց տեսությունները զարգացրել են իբրև գիտական տեսական վարկածներ, առանց քաղաքական ձևավորումների:

Սակայն առաջին համաշխարհային պատերազմից հետո, Գերմանիայում սկսվեց մի շարժում՝ ազգայնական պան-գերմանական շարժումը, որը Գոբինոյի և Չեմբեռլենի տեսությունները վերցրեց ամբողջությամբ, իբրև վերջնական ճշմարտություններ, վերածելով դրանք քաղաքական դավանանքի, դոգմայի: Բազմաթիվ գերմանացի հեղինակներ, գիտնականներ, հարյուրավոր հատորներ են գրել հիմնավորելու և զարգացնելու համար վերոհիշյալ ցեղաբանական տեսությունները, վեր հանելով գերմանացի ժողովրդի ցեղային գերադասության դոգման:

Ըստ Գոբինոյի և նրա համախոհների, արիական ցեղը իբրև օրրան ունեցել է Կենտրոնական Ասիան, որտեղից երկու ճյուղավորումներով այդ արիական ցեղերը տեղափոխվել են դեպի արևմուտք: Մեկը՝ հարավից դեպի Պարսկաստան, Հայաստան և Փոքր Ասիա, մյուսը՝ հյուսիսից դեպի այսօրվա գերմանաբնակ շրջանները: Այդ տեղաշարժը կարծում են, թե կատարված է եղել շուրջ չորս-հինգ հազար տարի առաջ: Պնդում են նաև, թե մոտ երեք հազար տարի առաջ, արիական ցեղերից մի խումբ, հյուսիսից տեղափոխվել է դեպի Բալկանյան թերակղզի, դեպի ապագա հելլենների երկիրը և այնտեղ գտնվող ուրիշ ցեղերի հետ խառնվելով՝ ստեղծվել է հելլեն ժողովուրդը, որը այդպիսով կարողացել է հասնել քաղաքակրթության ու մշակույթի ծանոթ բարձունքներին: Ուրեմն նրանց տեսությունների համաձայն, հին Հունաստանի ողջ մշակույթը, ստեղծված մեր թվագրությունից մոտ հազար տարի առաջ, հետևանք է այն արյան նպաստին, որ արիական ցեղը բերեց և ներարկեց տեղական ցեղերին:

Այսպիսով, ուրեմն, անցյալ դարում ծնունդ առավ մի ցեղապաշտական տեսություն, որ հիտլերյան շարժումը հետագայում այն դարձրեց իր քաղաքական հավատամքը և այդ հավատամքի վրա, Հիտլերը խմբագրեց իր նշանավոր «Իմ պայքարը» գիրքը, որտեղ նա լայն մեջբերումներ անելով Գոբինոյից, փորձեց հաստատել և եզրակացնել, թե գերմանացիները իսկական

հաջորդներն են արիական ցեղերի, որ առավելագույն չափով պահել են մաքրությունը նրանց արյան և հետևաբար առավելագույն իրավունքը ունեն տիրապետելու աշխարհին, հանուն մարդկության մշակույթի ապագա զարգացման: Հիտլերյան այս տեսությունն է, որ կոչվել է ցեղապաշտություն կամ նացիզմ:

Որպես նմուշ ներկայացնում եմ երկու մեջբերումներ Հիտլերի գրքից.

«Գերմանացի ժողովուրդը, լինելով ազնվագույն ազգությունը, մաքուր ներկայացուցիչը արիական ցեղախմբի, այո, գերմանացի ժողովուրդը պետք է աճի անկաշկանդ և գրավի նոր հողային տարածություններ պատերազմների միջոցով, իր գոյատևման և հզորացման իրավունքով: Մարդկությունը զարգացել է տևական պատերազմներով: Տևական խաղաղությունը կտանի նրան դեպի գերեզման»:

Ապա նույն Հիտլերը շարունակում է.

«Ով կամենում է խաղաղության հաղթանակը երկրագնդի վրա, պետք է ամեն ինչ անի, որպեսզի համայն աշխարհը գրավվի գերմանացի ժողովրդի կողմից»:

Մի նմուշ էլ Հիտլերի զինակից Բենիտո Մուսոլինիից.

«Տղամարդու համար պատերազմը այն է, ինչ մայրությունը կնոջ համար»: Ուրիշ խոսքով, ինչպես որ բնական կերպով կանայք երեխաներ են ծնում, տղամարդն էլ կոչումը ունի ծնունդ տալու պատերազմների:

Ահա նման մթնոլորտում է, որ 1933-ից հետո, երբ Հիտլերը հռչակվել էր Գերմանիայի առաջնորդ և սկսել էր զինել Գերմանիան մինչև ատամները, Լոնդոնում հրատարակվող «Թայմս» թերթում գնդապետ Մայերսը 1933 թ. սեպտեմբերի 18-ին լույս տեսած իր հոդվածում հետևյալն էր գրում Հիտլերի մասին.

«Այլևս կասկած չկա, որ Եվրոպայում հայտնվել է մի կատաղած շուն: Պետք է խոստովանենք, թե մենք՝ անգլիացիներս, և ավելի ևս ֆրանսիացիները ինչ որ չափով մեղավոր ենք, որ այդ շունը կատաղեց: Եթե այժմ իսկ, անմիջապես չմիջամտենք, ապա կարճ ժամանակ անց այդ կատաղած շունը պիտի դառնա մի վտանգավոր վայրագ գազան»:

Ահավասիկ ազգայնական գաղափարի այլասերումը ցեղապաշտության աստիճանին հասած:

Պետք է ասել նաև, սակայն, որ այդ ժամանակահատվածում, պատերազմից առաջ և հետո, բազմաթիվ գիտնականներ, մասնագետ հեղինակներ, բնագետներ, հնագետներ, բժիշկներ, պատմաբաններ այլևայլ երկրներից, բազում ուսումնասիրություններով և հրատարակություններով արմատապես հերքել են Գոբինոյի և հիտլերյան ռասայական, ցեղապաշտական տեսությունները իբրև կեղծիք և հակագիտական տեսություն, հաստատելով, թե աշխարհի վրա ոչ մի մաքուր ցեղ գոյություն չունի, և ոչ մի ժողովուրդ այդ իմաստով «մաքուր չէ», այլ բոլոր ժողովուրդները բազմահազար տարիների ընթացքում կազմավորված համախմբումներ են, խառնուրդ տարբեր ցեղերի և ցեղախմբերի:

Այսպես հիշենք, ի միջի այլոց, որ նաև հայոց մեջ ցեղապաշտական մի քամի փչեց պատերազմից առաջ Սփյուռքում:

Այդ գաղափարախոսության պաշտպանը Գարեգին Նժդեհ անունով մի հայ հասարակական գործիչ էր, որը փորձեց արտասահմանում հայոց մեջ ստեղծել ցեղպաշտական մի շարժում «ցեղակրոն» անվան տակ: Դա ծայրահեղ ազգայնական, ցեղապաշտական մի շարժում էր, որ բարեբախտա-

բար չքաջալերվեց նույնիսկ նրա կուսակցության կողմից: Սփյուռքում ոչ մի տեղ հող չգտավ այդ շարժումը: Մի պահ տարածվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ կարճատև կյանք ունենալով: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև եթե մենք հայերս, ծայրահեղ ազգայնական ցեղապաշտական հովերով տարվենք, ապա պետք է ընդունենք իրավունքը նաև այլ ազգերի ծայրահեղ ազգայնականության, մանավանդ մեծ ազգերի: Վայ մեզ, այսօր էլ, վաղն էլ, եթե մեր շուրջը ապրող մեծ ու փոքր ազգերը նույն ազգայնական քաղաքականության հետևեն: Փոքր ազգերի համար դա կլինի մահացու վտանգ, հատկապես մեզ՝ հայերիս համար:

Ազգության կամ ազգայնականության հասկացության վերաբերյալ ցանկանում եմ ձեզ ներկայացնել մի դատողություն՝ վերցված Բուխարեստի համալսարանի փիլիսոփայության իմ դասախոս՝ Պետրե Նեգուլեսկոյի գրքից, որը, իմ կարծիքով, շատ այժմեական է մեզ համար այսօր.

«Ազգայնական բառը մի հասկացություն է, որ արտաքնապես թվում է, թե իր ուրույն իմաստը ունի և սակայն այն իր մեջ պարունակում է տարբեր իմաստներ, բոլորովին տարբեր արժեքներ պարունակող: Ազգայնականությունը, երբ պաշտպան է կանգնում մի ժողովրդի գոյատևման իրավունքի և ազատ զարգացման, ազգային զգացումը գործելու խթան է հանդիսանում կատարելապես օրինական և բարոյական անառարկելի ազնվության: Այդ զգացումը կարող է նույնիսկ հասնել ազնվության կատարների, գերագույն անձնազոհումով:

Սակայն երբ այդ նույն ազգայնական գաղափարը հոչակում է որոշ ազգությունների անառարկելի գերադասությունը և այլ ազգերի անառարկելի ստորադասությունը, և առաջիններին տալիս է իրավունք ու հնարավորություն ճնշելու և իրենց ցանկացած ձևով վարվելու ստորադասյալների հետ, այդ պարագային ազգայնականությունը դադարում է հարգանքի արժանի զգացում լինելուց, որովհետև անարգում է արդարությունը և սպառնում է խաղաղության»:

Երևում է, որ վերջին երեսուն-քառասուն տարիների ընթացքում, Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ վերոհիշյալ բանաձևումի երկրորդ պարբերության ոգով, այսինքն ծայրահեղ ազգայնականության ոգով են ղեկավարվել Բաքվի որոշ ղեկավարներ անձի պաշտամունքի և լճացման տարիներին, հասնելով նույնիսկ ժխտելու Ղարաբաղի հայության ազգային ինքնությունը, պատմությունը, մշակույթի արժեքներն ու պատմական հայկական հուշարձանները:

Այս տվյալներով ես մոտենում եմ մերօրյա Ղարաբաղյան տագնապին և մտածում եմ, թե ամբողջ Ղարաբաղյան ողբերգությունը հետևանք է եղել Բաքվի որոշ պետական գործիչների գործելակերպի և որոշ պատմաբանների անուղիղ տեսությունների, որոնք երեի ներշնչված լինելով այսօրվա Թուրքիայի զեղծարար պատմաբանների տեսություններից, փորձել են ժխտել հայ ժողովրդի ազգային ինքնությունն ու մշակույթը ընդհանրապես, նույնիսկ ազգային մի հայրենիք ունեցած լինելու պատմական իրողությունը: Այս ահավոր մտայնությամբ է, որ Ղարաբաղի հայոց բազմադարյան վանքերն ու եկեղեցիները նրանք համարում են ոչ հայկական: Ահավասիկ տխուր հետևանքները ծայրահեղ ազգայնականության, որի մեջ ոչ մի մեղք չունի ադրբեջանցի բուն ժողովուրդը:

Սովետական Միության բազմազգ պետությունը կազմավորված է գաղափարախոսական հիմքի վրա, որ կոչվում է ինտերնացիոնալիզմ, այսինքն՝

ազգայնականության գաղափարի սողոջ և արդար ըմբռնման հիման վրա, ինչպես այն արտահայտվում է վերոհիշյալ ռումինացի դասախոսի բանաձևման առաջին պարբերության մեջ:

Սխալ պիտի լիներ ինտերնացիոնալիզմը ըմբռնել ապազգայնացման իմաստով, ազգությունը ժխտելու իմաստով: Ուղիղ կլինի ինտերնացիոնալիզմը կամ միջազգայնականությունը ըմբռնել որպես ազգությունների միջև համերաշխության ու եղբայրության գաղափար: Բնականաբար ազգություններ պիտի լինեն, որպեսզի նրանց միջև համերաշխություն և եղբայրություն լինի, փոխադարձ հանդուրժողությամբ, մեկը մյուսի ազգային ինքնությունն ու արժանապատվությունը հարգող: Մոլեռանդ ազգայնականությունը ազգայնամոլություն է, շովինիզմ:

Մենք հայերս ամբողջ սրտով պետք է պաշտպան կանգնենք ինտերնացիոնալ ոգուն, պայմանով, սակայն, որ նրա նշանաբանի տակ չթաքնվի ազգայնամոլությունը:

Ես հիշում եմ, քանի տարիներ առաջ մեր երկրի ղեկավար Բրեժնևի ներկայությամբ Բաքվի առաջին քարտուղարի մի ելույթը, որը, գովաբանելով ինտերնացիոնալիզմը, հայտարարեց, թե Ադրբեջանը կարող է օրինակ ծառայել Սովետական Միության հանրապետություններին, որովհետև իր երկիրը նման է ինտերնացիոնալիզմի մի լաբորատորիայի: Ահավասիկ, ինտերնացիոնալիզմի քողի տակ թաքնված ծայրահեղ նացիոնալիզմի մի օրինակ: Այլապես Բաքուն իրապես հարմարագույն վայրերից մեկը կարող է հանդիսանալ ինտերնացիոնալիզմի լաբորատորիա լինելու, նվիրական հիշատակովը կոմունայի 26 կոմիսարների նահատակության:

Ես քիչ զարմանում եմ, որ այս տեսանկյունով մեզ մոտ բավարար չափով չի մոտեցվում Ղարաբաղյան տագնապին: Երևանի ցուցարարները մի ժամանակ ցուցատախտակներ ունեին, որոնց վրա գրված էր՝ «Մենք էքստրեմիստներ չենք, մենք նացիոնալիստներ չենք»: Սա ճշմարիտ է: Բայց դա ճշմարտության կեսն էր: Հապա ո՞վ է նացիոնալիստը: Այդ չի ասվում հստակ և ուժգին կերպով: Նացիոնալիստները նրանք են, որոնք Ղարաբաղի հայությանը հասցրեցին այս վիճակին, այս աստիճանի վիրավորանքի և հուսահատության: Մեզ մոտ խրտչում են ոմանք ինտերնացիոնալիստ բառից, մտածելով, թե դա ինչ-որ սովետական հասկացություն է և մեր ազգայինի հետ կապ չունի: Ճիշտ հակառակը. մենք՝ հայերս, նացիոնալիստ չենք, և պետք է լինենք ինտերնացիոնալիստ, բառի իսկական վավերական իմաստով: Եվ այդ գետնի վրա պետք է ավելի հստակ արտահայտվենք ռուսներին և Մոսկվայի ղեկավարներին՝ ավելի լավ հասկանալու համար մեր ազգի հոգին:

Եզրակացնելով՝ ես ուզում եմ մի անգամ ևս շեշտել, որ ծայրահեղությունները, մոլեռանդությունները, դրանք լինեն ազգայնական, կրոնական կամ այլ տեսակի՝ վտանգ են մանավանդ փոքր ժողովուրդների համար:

Գուցե երկար տարիներ դեռևս աշխարհը շարունակի տառապել նման մոլեռանդություններից, ազգամիջյան թշնամանքներից, արյունահեղություններից, սակայն վերջ ի վերջո մարդկությունը պետք է հասնի իսկական հումանիստական ինտերնացիոնալիզմի կենսագործմանը, որովհետև այլ կերպ այլևս չի կարելի ապրել այս երկրագնդի վրա: Եվ պետք է մաղթենք, որ մեր երկրում, Սովետական Միության մեջ, մանավանդ այս օրերին, երբ խոսվում է վերակառուցման մասին, բարեփոխելու, վերափոխելու համար մեր երկրի սոցիալական և բարոյական կյանքը, պետք է մաղթենք, որ այս

բարեփոխումների ճանապարհով այս երկիրը կարողանա վերագտնել իր իսկական արմատները առհասարակ կյանքի բոլոր բնագավառներում, այն սկզբունքների հիման վրա, որոնցով հիմքերը դրվեցին սովետական բազմազգ պետության Հոկտեմբերյան հեղափոխության փոթորկումով, ու նաև ազգությունների ազատ ինքնորոշման իրավունքի հռչակումով: Մաղթենք, որ այս հզոր երկիրը ճշմարտապես վերադառնա այդ առողջ արմատներին, ազգայինի և ինտերնացիոնալիզմի ուղիղ, արդար ըմբռնումով: Այն ժամանակ է, որ մեր ժողովրդի հարցերն էլ արդարացի կերպով պետք է լուծվեն, որին մենք հավատում ենք և որը մենք պահանջում ենք:

Վերջացնում եմ իմ սույն զրույցը, մեջբերելով մի հատված իմ խոսքից, արտասանված այս տարվա մայիսի 4-ին, Ռոստովում կայացած միջեկեղեցական հանդիպմանը.

«Ազգերի մշակույթները մեկը մյուսին անհաղորդ նկատել կամ մեկը մյուսին հակադրել, կամ ժխտել իրավունքը ամեն մի ազգի մշակույթի գոյության ու զարգացման, դա պիտի լիներ պարզապես տգիտություն և հետադիմություն: Ինչքան անհրապույր պիտի լիներ այս աշխարհը, եթե բոլոր մարդիկ նույն լեզվով խոսեին, նույն ձայնով աղոթեին, նույն երգերը երգեին, եթե մեկ ու միօրինակ մշակույթ ունենային, եթե մեկ հոտ և մեկ հովիվ լինեին:

Իրականությունը այն է, որ ազգային լեզուներն ու մշակույթները իրար հարստացնում են, իրար ամբողջացնում են, իրար իմաստավորում են:

Ինտերնացիոնալ ոգի՝ նշանակում է Սովետական Միության ազգային հանրապետությունների և ամեն մի հանրապետության տարածքի վրա բնակվող ազգությունների միջև խաղաղ գոյակցություն և գործակցություն, նշանակում է, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային ինքնությունը և արժանապատվությունը, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային լեզուն և մշակույթը, որ ամեն ազգություն հարգի մյուսի կրոնական հավատը:

Ինտերնացիոնալիզմը լոկ վերացական գաղափար չէ, այլ անկեղծ ապրում ամեն մի սովետական քաղաքացու սրտում և կենդանի հավաքական գիտակցություն՝ արտահայտված հասարակական կյանքում իրավապես և գործնապես, համաձայն մեր երկրի օրենսդրական նախատեսությունների: Այլապես ինտերնացիոնալիզմի մարդասիրական մեծ գաղափարը կարող է վերածվել պատրանքի և խաբկանքի: Ես համոզված եմ, որ եթե վերջին երեսուն տարիներին, իրապես պահպանվեր լենինյան ինտերնացիոնալ ոգին հայերի հանդեպ, մեզ կխնայվեին Լեռնային Ղարաբաղի տագնապը և Սումգայիթի ողբերգությունը:

Մենք՝ սովետական ժողովուրդներս, մանավանդ մենք՝ դրացի ժողովուրդներս, պետք է ավելի սովորենք միատեղ ապրել, միատեղ քայլել, միատեղ աշխատել, միատեղ տխրել և միատեղ ուրախանալ:

Կրոնական և ազգայնական մոլեռանդություններն ու հակակրությունները, մեկը մյուսի ազգային-մշակութային ինքնությունը ժխտելու ձգտումները դեպի ֆաշիզմ տանող ճանապարհն է, մի սև ճանապարհ, որից հեռու ենք անշուշտ բոլորս:

Վերջացնելով, կկամենայի այստեղ նաև հաստատել, թե ինտերնացիոնալ ոգին շատ հարազատ է մեզ՝ քրիստոնյաներիս: Արդար կլիներ հիշել, թե պատմության հորիզոնի վրա ինտերնացիոնալ գաղափարի ուղիղ հասկացված առաջին փաստաթուղթը Քրիստոսի Ավետարանն է եղել»: